




Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
փանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ .
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ առդաստի շղթիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

(MANUFACTURING COMPANY)



մեքենան լաւագոյն է . սոյն մեքենան ամենէն կտորեկ լողործուածը,
հաստառունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՆԱԲԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|---------------|--|
| ԲԵՐԾ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիսէին դէմ . |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը . |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՏԱՐ | Զարչը Պոյուլ , թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղաֆներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և 343 կրկին, Տիւզդուլի տունը :



ՐԵԻԵԼՔ

ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆաղաֆական :
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4 . Պոլ-
սոյ համար 80 դրշ . վեցամսեայ 45 դրշ . դա-
ւառներու համար տարեկան 108 դրշ . վեց-
ամսեայ 60 դրշ . և օտար երկիրներու համար
տարեկան 35 ֆր . վեցամսեայ 20 ֆր . Զեւքէ
վաճառում՝ Տասը փառա : **ՐԵԻԵԼՔ**
հրա լարակ կ'եղէ ամէն օր , կէս օրին , իը-
նաճեալ բովանդակութեամբ , ընտիր յօդուած-
ներով , թարմ լուրերով ու նորագոյն տեղե-
կութիւններով :

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խմբ-
ագրութիւնով և իր կարող աշխատակիցներ-

րով , առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տե-
ղական հայ մամուլին մէջ :

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-
ԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանգամանքը , որով իր
ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերա-
բար : Ծանօթ Դէմքեր և Երբեմն ալ տեսա-
բաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մաս-
նագիտական յօդուածները , եկեղեցական ,
կրօնական , անտեսական-սեղանաւորական ,
երկրագործական , իրաւաբանական եւայլն ,
բացի գրական , բանասիրական գրուածքնե-
րէ , օրուան տեսութիւններէ եւայլն :

ԱՐԵԻԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն
ու բաժանորդագիրն լայնօք է ուղղել Տէր և
Տնօրէն Գարեգին Էֆ . Պոյաճեանի հասցէին ,
Չալաթիա , Մանուկէ Զատտէսի , ուր հաս-
տատուած են թերթին տպարանն ու խմբ-
ագրատունը :



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՂԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 20

ՇԱՐԱԹ

12 ՅՈՒՆԿԱՐ 1908

ԽՄԲԱԳԻՐԱԿԱՆ

ԹԵՐԹԻՆ ԽՕՍՓԸ

Ութ օր կը յապաղինք յայտնելու մեր ան-
կեղծ շնորհակալիքը, ամէն անոնց՝ որոնք
գրաւոր թէ բերանացի իրենց ջերմ շնորհա-
ւորութիւններով ողջունեցին մեր Կաղանդի
բացառիկ ալպօմը:

Գրական ասպարէզը նետուելէս ի վեր՝
գրեթէ ամբողջ եօթը տարիներու շրջանին
մէջ ջանացած եմ կարելի եղածին չափ օգ-
տակար ըլլալ, և ծիծաղի ձեւին տակ կըր-
թել մեր մութ խաւերը, ծառայել հաւա-
տարմարար Պետութեան, Որուն շուքին
տակ կը վայելենք բիւր բարիքներ, և Որով
նորանոր քայլեր կառնենք կրթապէս թէ
գրականապէս, օրինակ մեր դպրոցներու յա-
ռաջդիմութիւնն և մեր օրաթերթերու ու
պարբերականներու ճոխութիւնը:

Թերթի մը Տնօրէնին պարտքն է իր մտա-
ւորականն և բարոյականը զոհել՝ յօգուտ իր
ընթերցողաց, մենք, առանց պարծենալու

կրնանք ըսել թէ՝ այդ երկուքին հետ կը զո-
հենք մեր նիւթականն ալ, վկայ տարուէ
տարի հրատարակուած բացառիկ թիւերը,
նամանաւանդ 1908ին, որ հակառակ սուղ
կարծուած 3 դրշ.ի գինին՝ ծախքն անգամ
չէր գոցեր, թողունք չահը:

Այս տարի ամէն նիւթական զոհողութիւն
յանձն առած՝ ուղեցինք կարելիութեան սահ-
մանին մէջ ալպօմի ձեւին տակ ծանօթացնել
մեր սիրուած դէմքերը, կրօնական թէ աշ-
խարհական, դէմքեր՝ որոնք թերեւս անծա-
նօթ կը մնային մեր Պատ. ընթերցողներէն
չատերուն համար: Կը խոստովանինք սակայն
թէ՝ թերութիւններ սպրդեցան այդ ՅԻՍՈՒՆ
և ՀԻՆԳ լուսանկարներուն ամբողջութեան
կամ շարադասութեան մէջ, սակայն երբ
նկատի առնէք թէ՝ ի՞նչ դժուարութիւննե-
րով կրցանք բոլորը մէկ համախմբել և հաս-

ցընել օրը օրին, անշուշտ ներողամտութիւնը կունենաք, նոյն իսկ ձեռքէն բռնախնդիրներէն անգամ:

Այս ստուար և բազմապահանջ թիւը յաջողցնելը՝ միմիայն մէկ ձեռքը և մէկ գրչի գործը չէր, և անհուն շնորհակալութեամբ չուզամ յիշել օգնականներէս՝ գրչի աղբարիկներուն՝ Թէոդօրիկի և Սարգիս Սաքաեանի անձնուէր օժանդակութիւնը այս մասին, որոնցմէ առաջինը իր Ամենուն Տաբեցոյցին է՛ն տաք տոնին, և երկրորդը իր վաճառականական զբաղմանց միջեւ աշխատութեան լայն բաժին մը բերին կցել, որպէս զի Հանրագիտակ ինչպէս ուրիշ տարիներ՝ նոյնպէս և այս տարի միակը և ՄԻՄԻԱԿԸ հանդիսանայ նմանորինակ բացառիկներուն մէջ: Չեմ գիտեր թէ մեր երեքին անխոնջ աշխատութիւնը արդարացո՞ւց այս ենթագրութիւնը:

Բայց ինչպէս կարելի պիտի ըլլար գիտակից ընել մեր ընթերցասէր հասարակութիւնը թէ՛ սովորականէն տարբեր գրական յամառ չեղում մը ունէինք Կաղանդի առթիւ, և ո՞վ վերահասու պիտի ըլլար թէ՛ Հանրագիտակ նիւթական մեծ գոհողութիւններով հրապարակ պիտի ելլար եւայլն: Եթէ ոչ մեր անաչառ պատուական թերթերն Մանգոլմէ և Արեւելք որոնք իրենց ինքնաբեր և համակիր հրատարակութիւններով ներբողներ չի զլացան այս առթիւ, նա մանաւանդ Մանգոլմէ առաւօտեան միակ թերթը, որ առանց նկատի առնելու իր գրական սքանչելի ձեռնարկին, 1980ի նոյն օրին հրատարակելի անդրանիկ թիւը, մեր Հանրագիտակին գովեստը կարգաց, առանց ո՛ր եւ է *arriere pensee*ի, գովելի կէտ մը՝ զոր ասկէ առաջ չատանգամ պատիւը ունեցած ենք ջատագովելու:

Անդին՝ ունեցանք չի քաշող թերթ մ'ալ, որ ո՛ր գիտէ այնքան հաշիւի մարդ, մտածեց որ մի գուցէ մեր բացառիկը հրատարակելով՝ իր *vente*էն հինգ հատ կորսնցնէ, որ ըսել է ... քաշ մը հաց: Կը ցաւինք չիտալը, և կը խղճանք այդ աստիճան *egoiste* պաշտօնակիցներու հանդէպ, որոնք իրենց ձոխ սեղանէն չի կրնալով յափրանալ՝ ուրիշին պարզ ընթերթին ալ աչք կը տնկեն:

Սակայն համոզուած ըլլալով թէ՛ ան որ

իր փառքն ու պատիւը իր անբիծ և անխոնջ աշխատութենէն կսպասէ՝ կը յաջողի, մենք ալ նոյն սկզբան վրայ առ ոչինչ գրելով չաք նախանձ լռութիւնները, լոկ մեր բարեկամներուն սրտաբուլիս ծափերէն քաջալերուած կը գոհմանք և չենք դադրիր մեր ջերմ շնորհակալութիւնները յայտնել Պատ. հասարակութեան, որ գիտցաւ գնահատել մեր գրական ձեռնարկը: Կը խոստանանք գոհացնել զիրենք մեր յաջորդ թիւերուն մէջ, պարբերաբար ներմուծելիք գրական նորոյթներով, ֆանթազիներով և այն բարոյալից և օրինակելի գուարթաբանութիւններով, որոնք ստորագրելու պատիւը պիտի ունենայ՝

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԻԶՄԻՐԵԱՆ ՔՐՈՆԻԿ

Հին՝ միամիտ ժամանակներու մէջ, ամօթ թոյ զգացումը աճեցան զօրաւոր էր մարդոց էութեանը մէջ որ, — կը պատմեն ծերերը, — եթէ մէկը դիպուածաւ գէշութիւն մը ընէր, օրինակի համար, սատանան ճօրը մտնելով հասարակաց ինչքը իւրացնէր, անմիջապէս զղջումի կուգար, կուլար կաղօթէր ու ամօթէն օրերով տունէն դուրս չէր ելլէր: Իսկ այսօր, շնորհիւ բարբերու հսկայական շրջափոխման, ամշալն ա՛յնքան մեծ ամօթ համարուած է որ, նոյն իսկ հրապարակաւ ժամացոյցնիդ յափշտակողին ընկերը կրնայ դէմերնիդ ելլալ և, յոխորտանքով մը որ թաղական ընտրուող սակաւաթիւ մահկանացուք միայն կրնան ունենալ, ըսել ձեզի,

— Պէ՛տալար, ընկերս քեզի աղեկութիւն մը ըրաւ՝ գրպանդ աւելորդ ծանրութենէ մը թեթեւցնելով, ի՛նչ իրաւունքով ձայնդ հասած տեղը անուանարկիչ խօսքեր կը զրուցես կոր անոր հասցէին:

Կամ

— Կոպիդ մարդ, ո՛ւր լսուած է որ ժամացոյց մը առանց չղթայի գործածուի, չո՛ւտ սա չղթան հանէ ինծի տուր, թշուառական քեզի:

Կամ

— Հատտ ունիս նէ ընկերիս անունը բերան տուր, նայէ ինչ ձիւներ կը բերեմ գըլխուդ:

Կամ ... բայց ձգենք կամերը և դառնանք իրականութեան:

Շնորհաց այս ինչ թուականին, այն ինչ քարենպատակ հաստատութեան ընդարձակ սրահներէն միոյն մէջ, վասն ի վերուստի մեծադղորդ արարողութիւն մը տեղի կունենայ ... միաձայն, (այն ատենները եռաձայնը մօտա չէր): Հաստատութեան գործադիր ժողովը թէեւ դժգոհ ի մթան կատարուած սոյն հանդիսութենէն, այսու ամէնայնիւ կը ջանայ, օրինակելի համերաշխութեամբ մը, գործը étouffer ընել: Այլ ո՛րքան մեծ կըլլայ իւր զարմանքը, երբ քանի մը օր վերջը, իր ծածկել կարծածը՝ արծարծուած կը տեսնէ նոյն այն թերթին մէջ որ ցայն վայր սովոր էր Զաքարիական լուսթիւն մը պահել պաշտօնական զեղծումներու վերաբերմամբ:

Դիւրին է երեւակայել թէ ի՞նչ կանցնի կը դառնայ պաշտօնականութեան դիւրաբորբ գանկին մէջ՝ ի լուր այս անակնկալ պատահարին: Դիտէ որ թերթին Տէր և Տնօրէնը մէթալիկ չիտար այս տեսակ գործերու, ուրեմն ո՞վ կրնայ ըլլալ այն անպարիշտ տեղեկատուն որ ժպտած էր վատաբար լոյս աշխարհ ածել զեղծում և զեղծանող, ու ոգի ի բռին կը հետապնդէ զայն մինչեւ որ կը յաջողի հետքը երեւան հանել: Զա՛ր սատանայ: Կուզէ՞ք որ լրատուն մի եւ նոյն ատեն իրենց ստորակարգեալներէն մէկը ըլլայ, վա՛յ անոր ...: Իսկոյն պաշտօն կը տրուի լեզուն բերնին մէջը դարձող ջոջիկի մը երթալ գըտնել թերթին վարիչը և անկէ համար պահանջել:

Տեսարանը խմբագրատան մէքէնային սրբան է, ջոջիկ ու վարիչ, երկու քաջամարտիկ ըմբիշներու նման կազմ եռադմ շնչող նայուածքով զիրար կը չափնչեն:

— Ծա՛, սա քուկինիդ բրածը կը վայլէ՞ր, խօսք կառնէ ջոջիկը:

— Ի՞նչ ըրաւ որ, կը պատասխանէ վարիչը չրթունքները խածնելով ... չ'իմդալու համար:

— Ինչ պիտի ընէ, երկու բառով թէփէ թազլա բերեր էր խեղճը:

— Դիտնալս ձենէ դատ ուրիշ հասկացող չեղաւ այդ գրուածքը, հիշ մէրագ մի՛ ընէք:

— Ընտոր մէրագ չընենք, անկէց ի վեր ճգիկ ճգիկ կուգանք կոր, փարաները կուտենք կոր տէյի մէթալիկ չեն խտար կոր, ասանկ երթալու ըլլայ նէ բանալիները Տընտեսականին պիտի յանձնենք, ասկէց խապա՛ր ես:

— Է ճանրմ, դուք ալ այնչափ ետեւէն ինկաք որ ան ալ իմ բացակայութենէս օգտուելով չէնք շնորք երեսնիդ վար առեր է, հիմայ ա՛ս ալ յանցանք եղաւ:

— Յանցանք է հապա, չ'ամչցածը անդրտար տարի վարդապետներու հետ մէկ ամանէ հատիսա դգալած է, հիշ տէյիլ իսէ կտորիկ մը անյիշաչառութիւն չկըցա՛ւ սորովիլ անոնցմէ:

— Դուք ալ սա չափ անգամ եպիսկոպոսներու հետ մէկ սեղանէ խորոված գառնուկ և բիլաւ մատնոտած էք, չ'կրցա՞ք անոնցմէ փտորիկ մը ազնուութիւն, մարդավարութիւն, ամօթխածութիւն և որ կարելորն է, քրիստոնէական առաքինութիւն սորվիլ:

— Մենք պաշխա: Մենք պաշտօնական մարմին ենք, ատ գօյուն սիւրիւսիի պէս շարած առաքինութիւններդ չ'ունենանք նէ ալ կըլլայ, դուն մեղի մի՛ նայիր:

— Հապա որի՞ն նայիմ:

— Իշտէ սա քուկինիդ, որ ինկած մարդ մը վերստին ձգելու չափ խոնարհեցաւ:

— Եւ որովհետեւ դուք ալ, ընտանիքի տէր, զաւակներու հայր, իր կոչումին գիտակից, ազնիւ, բարեպաշտ և ձեր բոլոր ունեցածներուն վրայ իլիմօն քամող պարտաճանաչ քաղաքացի մը խափնեցնելու չափ ստորնացաք, ըսել է առնելիք տալիք չ'մնաց ֆիթ եղաք:

— Ես ֆիթ միթ չեմ գիտեր:

— Անանկ է նէ խաթրիս համար ներէ:

— Զ'պիտի ներեմ:

— Սեպէ քի չախա ըրաւ:

— Շախա՞ մի ...

— Կարեւորութիւն մի՛ տաք:

— Կարեւորութիւն չիտա՞մ մի ...

— Էյ, ի՞նչ ըսեմ հապա:

— Պիտի ըսես իրեն որ կամ ոտքերնուս

առջեւ ծունկի չոգէ, ձեռքերնիս պագնէ,
զձեզ մեղայ ըսէ կամ հրապարակաւ յետս
կոչուամ ընէ:

= Դիցուք թէ չըրաւ ...

— Պէտք է ընէ, ապա թէ ոչ ...

= Ապա թէ ոչ ի՞նչ կընէք:

— Ինչ որ կրնայ ընել պաշտօնական մը
ստակականի մը դէմ:

= Բայց ...

— Բայց մայց չիյտեմ ...

= Անիրաւութիւն է սակայն:

— Իրաւունքը հզօրագոյնին է:

= Իրաւ, խապար պիլէ չունէի:

— Այսուհետեւ ունեցիր: Գեղի պէս փոր-
ձառու լրագրապետի մը համար ամօթ է ա-
սանկ տարրական սկզբունք մը անգիտանալ:

= Ներե՛ս ուրեմն ո՛ր մեծդ արանց:

— Կը ներեմ, բայց ըսած պայմաններու
վրայ ... Ի՞նչմ ո՞վ ըսաւ քեզի քի ես մեծ եմ,
ատ ածականը սիրականներուդ տուր քի չապ-
խա մը պիլէ հանելու թէնէզզիւլ չեն ըներ
իրենցմէ վարերուն:

= Դուք ինծի համար մեծերուն մեծն
էք, ասիկա իմ համոզումս է:

— Ո՛չ, չեմ ընդունիր, պարապ տեղը
վրտս մի՛յնար, ես ալլախ կեօճիլլիւ եմ,
չեւ հաւտար նէ դրացիներուս հարցուր, խա-
նութիս առջեւը ես իմ ձեռքովս կաւեմ,
մեր արապ մահալլէի քարափէն անցած ա-
տենս ոտքի ելլողներուն աջ ու ձախ բարեւ
կուտամ, հետերնին կը խօսիմ, հալերնին
խաթրերնին կը հարցնեմ, և, հակառակ հա-
սարակական գործերու մէկ երրորդը շարու-
նակ ափիս մէջ գտնուելուն, մեծ հաճոյք
կըզգամ երբ սահէեէս հաց ուտողները իմ
մասնաւոր թոյլտուութեամբս մէյմէկ սիկար
կը ծխեն իմ իսկ ներկայութեանս:

= Չ'ըսէ՛ք որ խոնարհութեան մարմնա-
ցումն էք եղեր:

— Ի՞նչ կարծեցիր հապա:

= Մեղք որ այսչափ ատեն աւանակի
պէս մեծ ըլլալնիդ չեմ հասկցեր:

— Զիս կը շողոքորթես:

= Գաւ լիցի, ճշմարտութիւնն է որ կը
զրուցեմ:

— Պարապ խօսքերով ժամավաճառ չըլ-

լանք: Իմ հոս գալուս նպատակը կրցա՞յ բա-
ցատրել:

= Բացատրեցէք, պահանջեցէք, բայց
ոչ, հրամայեցէք, սա վայրկեանիս անանկ
ներչնչուած եմ որ եթէ ծովը նետուէ ըսէք,
պիտի նետուիմ:

— Ո՛չ, չեմ ուզեր որ ծովը նետուիս:
Ահաւասիկ քու ընելիքդ. Ա. եկեղեցական,
կրթական և բարեգործական զեղծումներու
մասին երբէք գրիչ չպիտի չարժես, Բ. Առաջ-
նորդարանի Դիւանատունն ինչ որ հրամա-
յեն ան պիտի հրատարակես, Գ. մեր ստո-
րակագեալներէն ով որ մեր արարքը քննա-
դատող յօդուած մը ներկայացնէ, անմիջա-
պէս ձեռագիրը մեզի պիտի յանձնես, Դ. մեր
պաշտօնակիցին ըրած կողոպուտը թերթիդ
մէջ հրատարակող սմանդուկին ինչ որ ընենք
ծանիկդ չպիտի հանես, Ե. եթէ օր մը հա-
մարձակին մեղի գըշ գըշ ընելու, թերթդ
ամբողջութեամբ մեր տրամադրութեան տակ
պիտի դնես, որպէս զի աչք բանալ չիտանք
մեր յաջորդներուն, ահաւասիկ ասոնք են
պահանջումներս, կընդունի՞ս:

= Կատարելապէս, ձեր կամքը հրաման
մ'է ինծի համար:

— Հա չէօյլէ, հանրային շահերու հոգա-
ծու հրապարակագիր ըսածդ ալ իշտէ ատանկ
պէտք է ըլլայ: Տեսնա՛ս, քեզի ինչ զըտար
բաժանորդ պիտի վաստկցնեմ:

= Բիւր շնորհակալութիւն, ո՛ր իմ ան-
զուգական և վեհանձն բարերարս:

— Չ'արժէր:

Ու ջոջիկը ձեռք բերած յաջողութեանը
վրայ ուրախ, պատարագւոր եպիսկոպոսի մը
պէս ծեքծեքելով, քայլերը կուղղէ գէպի...
Իրաւ որ ուր ըլլալը չեմ գիտեր: Ամբողջ
գիտցածս սա է որ՝ երբ խմբագրատունէն
հեռացաւ ջոջիկը, սովորաբար լուրջ կար-
ծուած խմբագրապետնիս անոր հասցէին սա-
քըջլալիւ աղաղակը արձակեց.

Հաւկի՛թ . . . :

Իզվի

ԳՐԱԾԱՐ



ԶԱԽԿԻ ԿԵՂԾ ՍԵՐ

ԿՆՈՋ ԳՈՒՐԳՈՒՐԱՆՔ

Լման 60 տարեկան կար Յուսեփ աղան, երբ զժառղդութիւնը ունեցաւ կորսնցնելու իր ամուսինը: Մանչ մը և աղջիկ մ'ունէր, երկուքն ալ ամուսնացած, որոնք պիտի խընամէին զինքը: Բայց թէ որ առաջիկային ալ աւելի ծերանալով անտանելի վիճակի մը մատնուելու ըլլար, իր զաւակները դարձեալ սիրով պիտի խնամէին զինքը, հապա երեսէ ձգէին նէ, ինչ պիտի ըլլար իր վիճակը: Այս մտածուածով սիրտը դրաւ կրկին ամուսնանալ և իր այս որոշումը զաւակներուն հաղորդեց:

— Խենդեցար հայրիկ, գոչեց աղջիկը, աս տարիքէդ վերջը կը վայլէ, 35-40 տարեկան կարգուած մարդ ես չօգտե՞ր կոր, որ հիմակ ալ 60 տարեկանէն վերջը կընիկ առնելու կեցաս, խելքդ գլուխդ ժողվէ, նորէն նոր ճահիլ պիտի ըլլաս:

— Նէլէ՛ր սէօյլէրսին աղապա, կը պօռայ մանչը, չըլարերուն նէ օլտուն, չու եաչընատան սօնրա պէլա՛ ալաճագսըն պաչընա, չիմտիքի կէնճլէր պիլէ 40 եաչընտան սօնրա գառը ֆիլան ունուտուպ անճագ քէնտի էվլատլարընըն սէվտասը իլէ եաչամագ արդու խտլորար, սէն իսէ եէնիտէն եէնի ճահիլ օլույորսուն, տօղրուտու շաչըյօրում սէնին նաթուռանա:

— Պէ զաւակներս, ամուսնանամ կըսեմ կոր նէ ինծի պահող մը, խնամող մը ունենամ տէյի է, չէնէ կարգուելու զօռ մը չունիմ:

— Է աս ըսածդ ըէք եամա եղաւ հայրիկ, երկու հատ զաւակ ունիս ամուսնացած, ամիս մը ինծի եկուր՝ ամիս մը աղբօրս գնա, և կամ թէ կուզես նէ մինչեւ վերջը ես պահեմ քեզի, դուն բացէ ի բաց քու քէֆիթ համար կարգուելի կուզես կոր:

— Պէն լօլօ եութմամ աղապա, չօգ չիլքիւր իքի էվլատըն վար էվլի, պիրազ վագըրթ պէնտէ գալըրսըն պիրազ վագըրթտա գըղընա կիտէրսին, վէ եախօտ իստէրսէն սօնընա գառար պէ՛ն սագլայըմ սէնի, սէն աչըգտան աչըղա քէնտի քէֆին իչին էվլէնամէք իստէյօրսուն:

Դրացիներն ալ իմանալով Յուսեփ աղան կրկին ամուսնութեան մտադրութիւնը՝ սկսան ամօթել զայն:

— Յուսեփ աղա, հիչ վայլում չառներ շիտակը, պօյ պօյ զաւակներ ունենալէդ վերջը ինչ խասէվէթ կընես կոր, քիչ մը ատեն աղջկանդ, քիչ մը ատեն ալ մանչուդ կերթաս, անոնք ալ աղւոր աղւոր կը պահեն քեզի, 60 տարեկանէդ վերջը վորձա՛նք պիտի առնես գլխուդ:

Յուսեփ աղան սկսաւ խորհիլ, հիմակ սար սաղլամ մարդ եմ, անոր համար զաւակներս քեզ կը պահենք կըսեն կոր, սակայն աշխարհք է ասիկայ, կրնայ ըլլալ որ անդամալոյծ եղայ, արդեօք այն ատեն ալ պիտի խնամեն զիս, ես գիտեմ որ վաւիէ խեր չըկայ, բայց անգամ մը սա աղջիկս փորձեմ:

Առտու մը աղջկանը տունը գտնուած միջոցին, անկողնին մէջ կռնակի վրայ պառկած աղջիկը կը կանչէ, որ քառորդ մը վերջը գալով:

— Ինչ կայ նորէն ինծի կանչեցիր:

— Բա աղջիկ, քեզի բան մը ըսե՛մ, ալ ծերացեր եմ ես:

— Հէլպէթ, երեկուան ճահիլը չես եա, կեսուրս պիլէ անցած օր քեզի համար ցընդեր է ըսաւ:

Յուսեփ աղան մտովի, կեսրոջը հասցէին միշտ մը արձակելէ վերջ:

— Բէք շիտակ ըսեր է աղջիկս, չիւնքիւ գիշերը տեղըս մնալու եմ տէ խապար պիլէ չունիմ, հիմակ ալ փիսութան մէջ մնացեր եմ, ինչ ընեմ չեմ գիտեր:

— Բա վո՛ւյ, աս ինչ պէլա եղար դուն իմ գլխուս, սա նայէ պիւթիւն օտան կը հոտի կոր, քէչկէ կարգուէիր տէ աս տողերը չը քաչէի, վույ Աստուած իմ հիչ խնտալիք չես տուեր ինծի, չը հասնէի չը կատարէի կարգուելու, ես հիմա ինչ ճուղապ տամ էրկանըս, կեսրոջս, ամէնքն ալ օտար մարդիկ են, էյ հիմա կը մեռնիմ մարելիք կուգայ կոր վրաս:

Յուսեփ աղան տեղէն ցատկելով:

— Մի վախճար քա ինչ կըլլաս կոր, փառք Աստուծոյ բան մըն ալ չունիմ, շախաբրի չախա:

— Ասանկ շախա՛ կըլլայ մեղայ, մահուան տողերը գացի եկայ նէ:

Աղջիկնուս ի՞նչ ըլլալը հասկցանք կըսէ Յուսեփ աղան, հիմակ ալ մեր մանչը փորձենք:

Մանչուն տունը գտնուած միջոցին, Յուսեփ աղան նորէն անկողնին մէջ կռնակի վերայ պառկած զաւակը կը կանչէ:

— Ծօ տղայ, սանա պիր չէյ սէօյլէյիմ, պէն էհտիյարլանմըլըմ գայրը:

— Նէ օլաճագ, տիւնքիւ ճահիլիմ տէյիլիսին ա, զոգանչըմ պիլէ կէչէնլէքտէ սէնին իչին պոռնանմըլ տըր տէտի:

Յուսեփ աղան մտովի զոգանչին ալ հասցէին յիշոց մը արձակելէ վերջ:

— Հակկը վար օղուլ հակկը վար, չիւնքիւ պու կէճէ եէրիմի փիսլէմիլիմ տէ հապէրիմ պիլէ եօգ, շիմտի թէքմիլ փիսլէք իլինտէ եաթըյօրում, նէ եափայլմ պիլմէմ:

— Նէ տէյօրսուն աղապա, չըլտըրտմա պէնի, պէ ատամ քէչկէ էվլէնէիտին տէ պէօյլէ փիւսկիլիլիւ պէլա օլմայայըտըն պաշըմա, հայ սաղլըգ սէլամէթլէ եէթիլմէյէ իտիմ էվլէնմէյէ պարգլանմայա, պէն շիմտի նէ ճէլապ վէրէյիմ գառըմա, զոգանչըմա, հէփսիտէ եապանճը ատամլար, պագ չու իչէ պագ հէլէ, էլիմ այաղըմ թիթիլմէյէ պաշլատը:

Յուսեփ աղան տեղէն ցատկելով:

— Գօրքմա, նէ օլտուն, չօգ չիւքիւր պիր շէյիմ եօգ, չաքա էթտիմ չաքա:

— Օ՜ֆ հա շէօյլէ, պէօյլէ չաքա՞ մը օլուր, ագ գալտը չըլտըրաճարտըմ:

Այս երկրորդ փորձէն վերջ, Յուսեփ աղան, ալ մէկու մըն ալ ականջ չը կախեր և կրկին կամուսնանայ:

— Է՛յ, զաւակներնիս փորձեցինք, խեր մը չըլլալը հասկցանք, հիմակ ալ սա կընիլնիս փորձենք, տեսնենք անկէց խեր կա՞յ:

Առտու մըն ալ, Յուսեփ աղան, նորէն կռնակի վերայ անկողնին մէջ պառկած իր կինը կը կանչէ, որ վազելէն անմիջապէս կուգայ:

— Բա՛ն մը կուզե՞ս Յուսեփ աղա:

— Քա կընիկ, քեզի բան մը ըսե՛մ, կիւճէնմիշ մըլլար ամա, ալ ծերացեր եմ ես:

— Ասո՞ր համար կանչեցիր, ճանըմ Յուսեփիկ, ինձի համար 30 տարեկան ճահիլէն վա՛ր կը մնաս աճապա, դէմքդ ըսես նէ՛ Յուսեփ

սեփ գեղեցիկն էս գիտես քի, հէմ քանի՞ր կառնես հիսակուան ճահիլները, ո՞ր ճահիլը ուսլու վախիդ կանցունէ կոր, որին ճէպը նայիս նէ հապին խութին պակաս չէ, դուն ըսես նէ հիմակ քանի մը հատ ճահիլ կարժես, պէլլի պան է քի կէնճութինըդ ասդին անդին չես փտտեցուցեր:

— Ասոնք աղէկ ամա կընիկ, ես գիշերը տեղս մնալու եմ տէ, խապա՛ր պիլէ չունիմ նէ ասո՞ր ինչ պիտի ըսես:

— Իրա՛ւ կըսես Յուսեփիկ, տահա քիչ մը առաջ վարդերու պէս կը հոտէիր կոր, ըսել է հիմակ փիսուլթան մէջ մնացեր ես, վո՛ւյ վախ Յուսեփիկս վախ, երկու աչկոս ելլայ տէ քէօռնամ պիլէքիմ, է ելիր ելիր, ինչ փիսուլթան մէջ պառկեր ես, ելիր որ մաքրեմ ... սրբեմ:

Ահա տարբերութիւնը:

ԻՍԲԷՆՏԷՐ ԶԱՐԲԱՐԵԱՆ

ԱՆՄԻՏ ԳՐՈՒԱԾՔԻ ՄԸ

ՄԻԱՄԻՏ ՊԱՏԱՍԻԱՆ

Շատեր երբ թերթի մը մէջ մէկուն դէմ գրուածք մը կարդան և անոր պատասխանը չի տեսնեն օրը օրին, չեն ըսեր թէ կարեւորութիւն տուած չէ, այլ չէ կրցած պատասխանել կը մտածեն:

Ահա այս ժողովրդական կարծիքն ու կասկածը փարատելու համար է որ երկու տողով կը զիջանինք բացատրել Մասիսի անցեալ թիւին մէջ մեր բացառիկ Ալպօմին նըկատմամբ գրուածքը:

Ենովք Արմէնի պատկերը եթէ գիտնայինք թէ ՆՈՒԻՐԱԿԱՆ էր՝ չպիտի ուզէինք անշուշտ պղծել: Մասիսի խմբագիրը քաբիսներ ունի եղեր, այդ քաբիսները կրնայ քըչել իր 999 ոսկիով ձեռք ձգելիք ապագայ կէսին, բայց մենք ո՞ր եւ է պատճառ մը չունինք զայն յարգելու: ԻՄ՝ նպատակս էր (և ոչ թէ թէոգիկինը, բան մը որ անոր վերագրած էր Մասիսի ԼՈՅՍԷՆ չլմորած խմբագիրը) մեր թերթերու խմբագրապետներն ալ ծանօթացնել ժողովրդիկան, կերեւի թէ Ենովք Արմէն իբր սկսնակ մը շատ է տեսեր իր նուիրական (.) լուսանկարը այդ շարքին մէջ, և խիպէն է որ կը բողոքէ թէ ինչու զինքը մասնակից ըրած էինք կարողագոյններու մօտ, այդ ալ մեր պզտիկ թերութիւնը թող համարուի:

Այս անգամ այսչափ, յարգելի միեռօն, պատասխանիդ պատասխան ... ամենայն սիրով եթէ փափաքես:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԱՄԲԱԿՈՒՄԻՆ ԱՐԿԱԾՆԵՐԸ

[SUR LES MOTIFS VARIES DE Mr TCHIFTÈ SARAF]

Կին և նուազ, երկու գեղեցկագոյն և անբաժանելի տարրերը, որոնց համար հոգի- նիս կը թրթռայ ու մարմիննիս կը թռուռայ, եթէ քիչ մը երես դարցունես՝ իրենց ապե- րախտ բնոյթը երեւան հանելով կը լքեն քիչ, կը ձգեն այնպէս որ հազար դժուարութիւն- ներով կրնաս վերստին սիրաշահիլ զիրենք և անոնց հետ ապրիլ նախորդին պէս կամ քիչ մ'ալ աւելի: Գրականութիւնն ալ այսպէս է սիրելիներս (պատուելիական բանաձեւով), ընտրած ո՛ր եւ է գրական ճիւղերնիդ եթէ նոյն իսկ տարի մը, ամիս մը, շաբաթ մը ձգէք, նորէն ձեռք անցնելու համար հազար դժուարութեանց կը բաղախի: Ծիշդ այդ կացութեան մէջ կը գտնուիմ հիմա որ, գրի- չըս ձեռք կառնեմ զուարթ էջեր արտադրե- լու համար, շաբաթ մը դադարէ վերջ, երբ ստիպուած էի պահ մը յանքիլ մեր բացա- ուիկէն վերջ որ, զիս բացառիկ ծախքերու մասնելէ ետքը չփափած պիտուիի մը պէս խոյս տուաւ մօտէս, ու դնաց ան աս ուրա- խայնելու:

Ֆին ամբանեին վրայէն գայլը փախիւ ճակերուն չե՛նք կրնար նմանցնել սա վերնա- գիւրը, որ խեղադիւրումն է մեր գրագէտ բարեկամին Զիֆթէ-Սարաֆի հեղինակութեան Միամիտի մը արկածները, զոր յեղաշրջեցինք Ամբակումին արկածներուն, արկածը միշտ արկած կը մնայ, և միամիտն է որ Ամբակու- մի կը փոխուի: Այսչափ:

Տանձ էր նէ բուսաւ, խնձոր էր նէ եղաւ կըսէր մամիկս, և կարծեմ թէ ձեր նինքներն ալ կրնա՞ծ ըլլալու են այս ասացուածը զոր ոչ-Հիւկիօ և ոչ ալ Վօլթէռի խելապտուկին մէջ գթգթացած է: Կաղանդ, Ծնունդ, շը- նորհաւոր, Վիզիթ, նոր լաթ, կըռչ կըռչ կո- չիկ, բըթաբըթ փողկապ, տիք օձիք, տիք պիւտեր, ձեռքի չփշփուք (խօսք և նիւթ չի գտնալէն), եկեղեցի, պնակ, գանձանակ, քահանայի թուօցիկ բէշեր, խոստովանանք,

թուալէթ, խառախոնձօղոզ գլխարկ, սուառէ, միւղիք, նուէր, պարտք, վաշխառուի տո- կոս, պտուղ, ստամոքսի խանգարում, քօն- եակ, անուշապուր, նշանածի պագտուունք, և կարգ մ'ալ անխոստովանելի և անասելի ճիւղէարանութիւններ, որոնք այս օրերուն անցան նոյն իսկ դերեզմանապարտէզին՝ entrées վճարող տոմսակի ձեռին թինթիններու միջեւ, ահա ասոնք ըսել կուզեմ եղան ան- ցան, ամէն տեղ, ամէն գիւղ, ամէն տուն:

Եւ որպէսզի մեր Գերազնիւ ընթերցողաց քիչ մը ժամանց հայթայթենք, հոս վարը պիտի նկարագրենք պատկերներ, որոնց հե- րոսն է, ոչ թէ Յովհաննէս Տոնիկը, այլ Ամ- բակում աղան:

Կաղանդի գիշերն է:

Թառչին պահարէն աւելի դրամին համը առնող էսնաֆներն անգամ կանուխ տուն դարձած, սուլու պաշիկներով իրար կը շնոր- հուորեն տարի մը եւս ողջ առողջ ապրած ըլլալնուն համար, ու Տաղաւար օրերու պա- տարագուոր եպիսկոպոսներու ձեռքերէն ա-ւելի կը թրջին ընտանիքի պետերու թաթիւ- րը... անշուշտ նիւթական ակնկալութեամբ: Դուրսը փողոցի լակտներ երկերկու երեք երեք, աղտոտ լապտերով մը աւետիսը կեր- գեն փոխան... տասնոցի, մինչ աւելի ու- չարիները լաթէռնաներով դուռ դուռ կը պտըտին կիկլոպներուն պէս տուններն ի վեր նայելով:

Ամբակում աղան ուշ ատեն տուն հաս- նելով՝ ծակ լաստիկներէն ջուր առած կոչիկ- ները հանելով կղբաղի, մինչ տիկինը ձեռ- քերը քոռսածին տակ խաչաձեւած դէմը կե- ցած է, և աղջիկներն ալ անոթի փխիկնե- րու պէս աչքին մէջը կը նային:

— Ուշ մնացիր Ամբակում աղա, կըսէ Բերսարէ, գիտե՞ս ֆէսֆէսէ ըրինք...

— Շնորհակալ եմ ամա՛, ինծի անանկ կուգայ քի կէս գիշերին ալ եկած ունիմ տէ ատ լախըռտըն հիչ իմացած չէի...

— Տէր ողորմեայ Ամբակում աղա, ատ ինչ խօսք է ... տուններնու թէմէն ես...

— Մըսէր Բէրսարէ, վրաս փուշ փուշ կըլլայ կոր ... շատոնց է ասանկ ճիւղէներ լսած չունէի տէ, ըսած լախըռտըներդ չեփած գինիի պէս կլոխս կը զարնէ կոր ...

— Դուն անանկ ես զաթը, ո՞ր վախիթ սէր մուհապէթ ցուցուցած չենք քի, ամա, անանկ սէրթէշմիշ կըլլաս քի, սըրա չես ձգէր քի ներսիթինիս դուրս թափենք, նայէ պոյ պոյ ծառք պագի կեցեր են ...

— Հէլէ վեր կլանք, ինքիզինքս գտնամ մէյ մը աէ, կըսէ ու բոլորը մէկ վեր կկլան, ու հազիւ կունակը բարձին տուած թէ չէ, Բերսարէ մօտենալով,

— Շատ տարիներու Ամբակում աղա, մէկ բարձի վրայ ծերանանք ...

— Շնորհակալ եմ ամա, մինակ տեղը ըսէիր քի տարին մէյ մըն էր, պաշիկ մը ընէի ... կըսէ ցած ձայնով:

— Ելէք ծառք պագէք քա աղջիկներ, հօրերնուդ տուվան առէք ...

Ու կարգաւ երեք աղջիկները կսկսին ձեռք պագի:

— Ապրիք, ապրիք, նայեցէք աղջիկներ ձեզի բան մը ըսեմ, իրաւ քի առաջները հար խըսմին ասանկ տարի գլուխին պոյ պոյ հէտիյէներ կուտան եղէր ամա, աս թռախօման իճատ եղածէն պէրի, ատ առէթը վերցած է, թփտան փեսաներուն ծառքը կուտան կոր հիմա ...

— Աման դուն ալ Ամբակում աղա, թոհաֆ էս, աղջիկներս անտեղո՞ւնքն են, դուն ողջ ըլլաս կըսէ տիկինը:

— Աման հայրիկ ինչե՞ր կըսես ... մենք քենէ էրիկ կուզենք կոր ... կըսէ օրիորդը կոտորտուելով ...

— 1907ն ալ անցուցինք ամա, ութը չիֆթ նիւմէո է, մութլախ չիֆթ պիտի ըլնք, ասանկ լախըռտըները առաջ զաւկի չէր զուրցուէր ամա, հիմա սիւլուրեայ է աղջիկս ...

— Ո՛ւֆ հայրիկ, ատանկ խօսքեր մընէր մեղի, մենք գիտես որ կը խափինք, կա՛մըշնանք, մենք դեռ երախայ կը սեպուինք, դուն ե՛րբ հրաման ընես նէ, հարկաւ մեր ժամանակը գիտես ... կը պատասխանէ կըր-

կին Նուարդ, որ մեծ աղջիկն էր ... քսանս և հինգնոց:

— Ապրիս աղջիկս, հմուկ աղջիկս, դուք աչքս նայեցէք, ըսելով օտքի կելլայ և բոլորը մէկ ճաշի կը նստին:

Ճաշէն վերջ ըստ սովորականին Ամբակում աղա բաղմոցին անկիւնը կսկսի մրափել, մինչ վարի դուռը յաջորդաբար զարնուելով մեր ամօթխած և՛ մօռօ բէքի օրիորդներուն ծմբերը կարգաւ կուզան, երեք ընտրեալ հովկուլներ, որոնք անմիտ մօր մը թոյլատու բնոյթէն օգտուելով մինչեւ անգամ համարձակած էին տուն գալ և tète à tète տեսակցիլ օրիորդներուն հետ, առանց ո՛ր եւ է ծնողական արգելքի, մինչ մայրն ալ վարը խոհանոցը ամանները լուալով կը բաշէր:

Տեսարանը անսկարագրելի է հիմա: Կէս վառ կազի մը լոյսէն հազիւ լուսաւորուած սենեակ մը ուր երեք խումբեր զատ զատ նստած, անշուշտ Սաղմոս չէր որ կը քաղէին ...:

Ամբակում աղա գէշ երազէ մը անթնցածի պէս տեղէն կլլալով կաղը ձեռքը կամաց կամաց վար կիչնէ և չիտակ վարի սենեակը դիմելով դուռը կը բանայ:

— ... Առանց բառ մը արտասանելու չիտակ խոհանոց կը դիմէ իր կնոջը մօտ,

— Ինծի նայէ Բերսարէ, չախան ասխըտար կըլլայ, դուն գիտցար քի ես աղջիկներս աս տարի մահրո՞ւմ ձգեցի, եկո՞ւր ...

— Աման Ամբակում աղա, կէնէ ուրուր ուրուր ի՞նչ կը պտըտիս կոր, դուն աս վախիթ կը պառկէիր նէ ...

— Պառկիմ պիտի ամա, չի քնացած աղջիկներուն հէտիյէները ծառքովս տաղըթմիշ ընեմ տէ անկէ ետքը մէզառ մտնամ ըսի ...

— Ամբակում աղա, վախիթ չունիմ քեզի հետ ճիւղէլէշմիշ ըլլալու, եղըրնով աման կայ լուալիք, հայտէ վեր ելիր, հիմա աղջիկներէն մէկուն մէկը գալու ըլլայ նէ աղէկ չի փախչիր, մենք ալթըրիս ատ վախիթները անցուցեր ենք, հայտէ հայտէ, կըսէ մայրը, գործին անգիտակ ձեւանալով:

— Աղջիկները իրենց հէտիյէները առէր նստեր են, էյլէնմիշ կըլլան կոր, հիշ մէռաք

չե՞ս ընդեր կոր քի ինչ հետիլէ տուի տէյի, մէյ մը եկուր քովի օտային դրանը առաւր- խէն նայէ ...

— Բան մը ըսել կուգես կոր ամա՞ չեմ հասկնար կոր Ամբակում աղա ...

— Դուն տա պուլաշընը ձգէ տէ եկուր սէյի ըրէ քի նասը պիտի պուլաշմիշ ըլլամ, ըսելով կնոջը թեւէն կը քաշէ և չիտակ կը տանի այն սենեակը՝ ուր խեղճ միւսիւնները խախտը ինկած մուկերու պէս կը դողային, չի կրնալով գտնել ծակ մը փախչելու համար։

— Քա՛ ... ասո՞նք ով են նուարդ ... Ի՞նչ կուղէք միւսիւններ, կը հարցնէ Տիկին Բերսաբէ, կեղծ բարկութիւն մը և այլալուծ մը ցոյց տալով։

Ու մինչ Ամբակում աղան թափան սիւ- փիւրկէսիին կոթը կը քաշէր վրանին ծեծ վազելու համար, յանկարծ երեք երիտա- սարդներէն մին գրպանէն տետրակ մը կը հանէ, միւսը թաշկինակին չորս ծայրերը կը ըռնէ, և երրորդը գրպանէն թուղթէ լապ- տեր մը հանելով կը վառէ։

— Աղքատախնամ ... ամէն տարի բա- րով հասնիք Ամբակում աղա, քանի՞ ղրուշ պիտի գրենք ...

* * *

Չենք գիտեր թէ Ամբակում աղա ինչպէս հատուցանեց ինքնակոչ միւսիւններու Աղքա- տախնամին դիմակին տակ ըրած խնդրանք- նին, սա չափը ըսենք որ տղաքը եթէ ֆի- ղիքապէս տուժեցին, Ամբակումն ալ ոչ նու- ալ տուքանքներու ենդարկուեցաւ ... բա- րոյապէս։ Ասիկայ իր առաջին արկածը։

Ծնունդի առաւօտուն ըստ սովորականին Ամբակում աղա անտուկահոտ պահեստի սեւ քօսթիւմը հագած կը դիմէ եկեղեցի, կա- նուխ շատ կանուխ։

— Անցած ըլլայ Ամբակում աղա ... կը ձայնէ մէկը, որ նոր սկսած էր աղօթել։

— Կէչմիշ օլսուն Ամբակում աղա, խօսք կառնէ ուրիշ մը։

Ու այսպէս խեղճ մարդը կը շրջապատեն ու կսկսին քաշքշել։

Քիչ վերջը երբ Ամբակում աղա, այս օր դաս գլուխը բացած գաւիթին երկաթ որմին առջիւ համակ հաւատք կարած կաղօթեր, կին մը գլուխը դուրս ձգելով,

— Ամբակում աղա, խաչդ հանելէդ ետ- քը ետիդ դարձիր բան մը պիտի ըսեմ ...

— Ի՞նչ է ան ըսէ նայիմ, ես աղօթքս շատոնց լմնցուցեր եմ ...

— Հա՛, էյ ի՞նչ գիտնամ, սա պիտի ը- սէի քի անցած ըլլայ ...

— Ի՞նչ կայ, ի՞նչ է եղեր քի ...

— Տէր ողորմուայ ըսէ, չար խապարը թէդ կուգայ ... պարէ սախտութիւն մը կա՞յ ... իմացայ նէ չիյտէս ինչ եղայ ... ան կիւ- գէլիմ ֆիտան աղջիկներս ...

— Ձգէ տէ իւշիւնճիւ խաչս հանեմ կը- նիկ ...

— Քա ամա Ամբակում աղա՞ ..., նա- սը եղէր տէ իրեքը մէկ ներս են մտեր, դուք ալ ֆառլին չէք ...

— Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մենք թո ...

— Քա անապ ինտո՞ր դող ելան աղջիկ- ները ... Բերսաբէն ի՞նչ կըսէ անապ ...

— Թողունք մերոց պարտապանաց և մի ...

— Երկու լուսերնին քէօռնայ քի ալ բան չեն գտնար կոր տէ, տուններէն ներս սալ- տըրմիշ կընեն կոր ...

— Եւ մի տանիք զմեզ ի փորձութիւն ... այլ տուր ինձ համբերութիւն ...

— Քա ի՞նչ է եղեր քուրուկ, որ սահաթ է սիրտս կը հասնի կոր ամա, Սաղմոսը ծառ- քըս է տէ, մէկ տունը օլսուն լմնցունեմ ը- սի ... կըսէ ուրիշ կին մը մօտենալով։

— Հի՛շ, ի՞նչ պիտի ըլլայ, կաղընտին գիշերը չիմացա՞ր ...

— Չէ քա ո՛ւրկէ իմանամ ... աման չա- փուխ ըսէ, սիրտս չարքմիշ կընէ կոր ...

— Քա ի՞նչ պիտի ըլլայ իշտէ, իրէք տէ- լիխանլը կաղտուկէն տունէն ներս են մտէր տէ ...

— Էյ ... երկու աշուրնին քէօռնայ ...

— Իշտէ ի՞նչ գիտնամ, Ամբակում ա- ղան թող նախէ ...

— Աֆ կընես Ամբակում աղա, նախէիք տէ հասկնայինք, սիրտս հոր հոր կընէ կոր, իրաւ քի կաղօթես կո՞ր ամա ...

— Սուս եղէք պէ՛, մտերէն նէ իմ տու- նըս մտեր են, ձեզի՛ ինչ ...

— Քա չօգ չէյ, աս ի՞նչ լան սիրտ ես եղէր, մահալլէին մէջը արտառոց պան մը

կըլլայ տէ մենք խապար չունենանք սան-
քի ...

Նոյն պահուն Ամբակում աղա անանկ մը
կը պոռայ որ եկեղեցիին մէջը գտնուողները
բոլորը մէկ ասդին կը դառնան, ու հոն գըտ-
նուող թաղականներէն մին իրեն մօտենալով,

— Դուրս ելէք աղա, դուրս դուրս, հի-
մա հիմա ...

— Պէ պապամ, ի՞նչ կուզէք կոր, ես ա-
ղօթք կընէի կոր աս կընիկները ...

— Վախ վախ վախ, ագլընա կէլմիշ,
ժամկոչ չաղըսն էֆէնտիմ ... գատըն վար
չօլուգ չօճուք վար ... կըսէ ուրիշ մը ...

— Ծօ՛ ժամկոչ աղբար, դուրս հանէ սու-
իկայ ...

— Ծօ՛ ի՞նչ կըսէք կոր, աղօթ ...

Ու ժամկոչը գալով՝ հրելով հրմշտըկելով
դուրս կը հանեն Ամբակում աղան, և շիտակ
բանկալը կը խոթեն:

— Հէքիմ չիգայ ճանըմ... պաղ ջուր...

— Մընէք պէ՛ ... ծօ պիր շէյիմ եօգ
տուր, Աստուծու սիրուն ...

— Խո՛ւլ ես ծօ՛, գնայ հէքիմ կանչէ ...

— Մէյ մը սա կոճակները քակեցէք ճա-
նըմ ...

— Չոր պոլսուղ, չոր պոլսուղ, արու-
նը կոխն է ...

— Ծօ՛ հէքիմ ... պաղ ջուր, ամա հո-
րէն մի քաշէք, տա եալախին մէջինը պաղ
է ինծի կուգայ քի ...

Հինգ վայրկենի մէջ բոլոր եկեղեցին գըտ-
նուողները դուրս կը թափին, մինչ Ամբակում
աղա իրօք խելագարածի ձեւեր առած՝ պառ-
պառ կը պոռայ, պիր շէյիմ եօգ ...

Բժիշկը կուգայ, լաթերը գլխովին կը
հանեն և բռնի գլուխն ի վար պաղ ջուր կը
թափեն, մինչ պէռպէռին մէկը պոլսուղ
քաշելու կը պատրաստուի:

Տեսարանը աննկարագրելի է հիմա, ամէն
ոք Ամբակում աղային վրայ ինկած օգտա-
կար ըլլալու կաշխատին, և ի վերջոյ խեղճ
մարդուն լալը տեսնողներ միջամտելով իս-
կոյն կառք մը կը դնեն և շիտակ տուն կա-
ռաջնորդեն զինքը:

— Վույ աչկս քէօնայ աս ի՞նչ հալ է...
քա ի՞նչ եղար Ամբակում աղա ... ըսելով
Տիկին Բերսաբէ դէմքնին կելլայ ...

— Հիշ ճանըմ, քիշ մը վրան գէշութիւն
եկաւ տէ ... կը ձայնէ հետը եկողներէն մին,
որ Ամբակում աղայի թեւէն բռնած էր:

— Վո՛ւյ վախնամ պան մը եղաւ, քա
աղջիկներ հասէք, հորերնուդ հալը նայե-
ցէք ...

— Վախ հայրիկս ...

Ու բոլորը մէկ կսկսին լալ պոռչտալ, մինչ
Ամբակում աղան զգայազերկ կը տանին պառ-
կըցնել իր անկողինը, ու ձայնը չի հանէր կը-
րած չարչարանքներէն թմրած յոգնած:

— Քա ոտքերնիդ պագնեմ ի՞նչ եղաւ կը
հարցնէ Տիկինը:

— Ճանըմ ի՞նչ պիտի ըլլայ, աս մարդը
ան է քի ասանկ հիւանդութիւն մը ունի նէ
մինակ մի ձգէք, ժամուն մէջը կեցած տեղը
պառ պառ պոռաց կանչեց, ժամկոչով դուրս
հանեցին, պէրէքեաթ վէրսին պաղ ջուրե-
րուն քի ինքիզինքը վար դրաւ ...

— Քա վախ եսվրում ունի ունի, պաղի
պաղի սընըրը կը պոռնէ, քա ի՞նչ գիտնամ,
Ծնունդի առտուով ժամ երթամ ըսաւ ...

— Ինչ է նէ, իշտէ մենք թէսլիմ ըրինք,
դուք նայեցէք, հէքիմն ալ քիշ մը ետքը
պիտի գայ, ըսելով կը ձգեն կերթան:

Հազիւ կէս ժամ անցած թէ չէ, որու մի-
ջոցին Ամբակում աղա խօսք մը անգամ չը-
նէր, բժիշկը կարգ մը գործիքներ առած կը
հասնի:

— Խնտօ՛ր եղաւ հիւանդը Տիկին ...

— Չիյտեմ, պէ խապար պառկեր է տօք-
թօռ ...

— Շատ լաւ հիմա, ելեքտրականութիւն
պիտի բանեցունեմ, որպէս զի ջիղերը կազ-
դուրուին, կրնայ ըլլալ որ ...

— Աման տօքթօռ, չելլայ խաղա մը ել-
լայ ...

— Ա՛ ... այդ մասին անհոգ եղէք տի-
կին, մինակ կուզեմ որ մէկ երկու հոգի մօ-
տըս գտնուին ...

— Երկու աչկս քէօնայ, աս ի՞նչ ծուն
էր գլուխս եկաւ ... ըսելով վար կիջնայ ու
աղջիկները զինքը կը դիմաւորեն,

— Ի՞նչ է ան մայրիկ, ի՞նչ եղաւ ...

— Երեք հատ տինճ տէլիխանլը կուզէ
կոր քի մաքինայ պիտի պանեցունէ, քա ո՛վ
գտնանք ...

— Ինձի նայէ մայրիկ, մերիններուն խա-
պար ընենք թող գան, ան հիմա հալ չունի
չի ճանչնար ...

— Վույ աղէկ ըսիր, հայտէ թէզ ...

Բիչ վերջը երեք թեկնածունքը մէկ թէլի
վրայ հագուած կուգան և շիտակ բժիշկին
մօտը կեցան:

— Հիմա դուք հիւանդը բռնեցէք, ես
մեքենան լարեմ, կըսէ տօքթօր:

Ամբակում աղա որ մինչեւ հիմա ձայն
չէր հաներ, տեսնելով որ գործը իրական գոյն
կառնէ, անկողինին մէջ կեցալ կը նստի, և
խօսքը երիտասարդներուն ուղղելով,

— Նայէ չեմ պոռար կոր քի, լէօպէթը
բռնեց չըսեն տէյի, չնորհակալ եմ միւսիւ
տօքթօն քի, պէտք եղածը ընելու հազըր-
լանմիշ կըլլաս կոր, ֆախաթ նայէ պաղ ա-
րունով կըսեմ կոր քի ես բան մը չունիմ,
հէմ փարա ալ ունիմ ... հա՛ ... սա աղ-
քատախընամին կէզիճիները մէյ մը դուրս
հանեցէք ...

—

Բոլորը ափ ի բերան կը մնան, մինչ Տի-
կինը իրար անցնելով,

— Փառք քեզ Աստուած, ըսնտցա՛ւ ...

— Տիկին կըսէ բժիշկը, այս տեսակ հի-
ւանդները երբեմն ինէ քննէ աղէկ կը խօ-
սին ... ջուր, շուտ ջուրերը, ֆիւլիք շա-
պիկ, տաք խափլու ...

— Ինձի նայէ տօքթօն, ժամուն մէջի
կընիկը իս պոռացուց, աս հալը ինկայ, դուն
ալ իքինճի անգամ պոռացունելու ըլլաս նէ
շիտակ մէզառն հմ ... հայտէ վիզիթատ առ
տէ պաշխա դուռ նայէ ... Սա բանթալօնս
բերէք ... ըսելով ոտքի կեցալ:

— Աման Ամբակում աղա, էլէքթօիքէն
կը վախնաս կոր նէ, պէռպէռը վարն է, մէկ
երկու հատ պուշնուզ փակցունենք պարէ,
կըսէ Տիկինը:

— Հիմակուան նոր սխաթմով պուշնուզ-
ները պէռպէռները չեն փակցունէր կոր, հա-
սուկ, քիչ մը ֆըռթըխ, վախտը անցած աղ-
ջիկներ ունեցողներու հարերուն պուշնուզնե-
րը, ատ աղջիկներուն սայէյէն պէտէհավա-
տան կը փակչին կոր: Նամուսըս վրայ տալէս
ետքը, վուճուտս ալ մէզառը չերթալու հա-

մար, վաղը տաներեցը զրկեմ տէ ձեր խաթ-
րը խօշ ընէ, հայտէ օղլում ճատտէն բռնե-
ցէք ըսելով ճամբու կը դնէ զանոնք:

* * *

Ու մտածեցէք թէ՛ հայր մը ի՛նչ արկած-
ներու կը հանդիպի իր թերուս կնոջը և Յըռ-
քըխ աղջիկներուն երեսէն, ահա ինչո՛ւ կը
խրատեմ ու կը կրկնեմ թէ, աղջիկ մը մաղե-
րը վեր չտկելուն պէս՝ ծախեցէք, այս օր-
ուան պարզ գրագիրը՝ վաղուան վաճառա-
կանէն նախընտրելի է:

ԼԻԼԱ

ՎՐԻՊԱԿ Հանրագիտակի բացառիկ թիւին
Եպիսկոպոսներ խորագրով էջին (275) վրայ
սպրդած սխալները:

1. — « Երկուքին խառնուրդը՝ արգանա-
կով «Շամբանեա» խմելու պիտի նմաներ: —
Գրութիւն մը կամ լուրջ կ'ըլլայ կամ գաւե-
սական »:

Այս հատուածը չըջել և կարդալ սապէս

« Գրութիւն մը կամ լուրջ կ'ըլլայ կամ
ղաւեշտական. երկուքին խառնուրդը՝ արգա-
նակով «Շամբանեա» խմելու պիտի նմանէր »:

2. — « Եկեղեցին հաւատքի բառարանն է՝
կարդալ «Եկեղեցին հաւատքի վառարանն է» .
(նոյն անդ) »:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹՈՒԼԲԵՐԱՆՈՒԹԻՒՆ

ՅԱԶՈՐԴ ԹԻՒՌՎ

Յ. ԱԼՓԻԱՐ

ՏԻՇԼԷԿ

ԶԱԶԱ

Ս. ՍԱՔԱՅԵԱՆ

Ե Լ

Ճաթիկ ճաթիկ յօդուած մը՝

ԼԻԼԱ

ՄԱՐԿՏՈՒԿՆԵՐ

ԻՐԵՆ ԼՐԿՈՒԱԾ ԿԱՂԱՆԴԻ
ՆՈՒԵՐՆԵՐՈՒՆ ՇՈՒՐՋԸ

Կաղանդի օրը, ա՛յնքան անհամար նը-
ւէրներ թափեցան Ամբակումի գլխուն որ,
քիչ մնաց երկուքի պիտի բաժնուէր... Մը-
նակեան խումբին պէս... և թերեւս վերջ-
նական:

Երեւակայեցէք, Ամբակումի սենեակը —
որուն շուրջը օր մը Ամբակում պլքատումներ
պիտի ընէ — մինչեւ կէսը նուէրներով ու
ղողունեցաւ:

— Սկսէ՛ նայինք, ըսաւ Ամբակում՝
նառկիլին քաշելով ու մուխը դուրս տա-
լով, սկսէ՛, նայինք ինչեր ղրկեր են մե-
ծապատուութեանս...

Թիւերս սոթթելով մէջը ինկայ նուէր-
ներուն, և մէկ հատը առնելով սենեակին
մէջտեղը եկայ ու կանգնելով Ամբակումին
առաջը ըսի.

— Ամբակո՛ւմ, ահա գիրք մը քեզի,
Միամիտի մը արկածները, գրեց՝ Չմֆթէ-
Սարաֆ և որուն շուրջը դեռ անցեանները
պլքատումներ ըրինք եւ աժան ազատեցանք:

Նոյն պահուն գիրքը ձեռքէս վար իյնա-
լով խուլ աղմուկ մը հանեց, փայտի ձայն
մը:

— Բայց Ամբակում, տախտակէ է այս
գիրքը և հեղինակը ասանկ կը ղրկէ իր հո-
գե... հատորը քեզի անակնկալ մը ընելու
համար: Եւ ահա զսպանակ մը ձեռքիս հան-
դիպեցաւ: Ի՛նչ մը կոխեմ նայիմ թերեւս կը
բացուի: Այո ահա բացուեցաւ Ամբակում և
մէջէն քառթ մը դուրս թռաւ, և որ հեղի-
նակին այցաբարդն է, եթէ չես հաւատար
ահա,

ԶԻՖԹԷ-ՍԱՐԱՖ

Մեր անմահներուն վեցերորդը
Վեցերորդը անմահներուն մեր
Բօլ Պուրթէին բարեկամը
Բարեկամը Պուրթէին Բօլ
Ապագայ անդամ Ուսումնական Խորհրդոյ
Խորհրդոյ Ուսումնական անդամ ապագայ:

Եւ քառթը դարձնելով հետեւեալը. կար-
դացի բարձրաձայն.

Տիար Ամբակում.

« Իրաւ թէ կուղէի ձեզի կենդանի . . .
Միամիտի մը արկածները նուիրել, բայց
սպառած ըլլալով՝ ընդունեցէք այս տախտա-
կէ հատորը . . . »:

— Աստուած կեանք տայ, ըսաւ Ամբա-
կում, ուրիշ մը, ուրիշ մը:

— Ահաւասիկ Ամբակում, քեզի պզտը-
տիկ տուն մը, որուն ճարտարապետութեան
սքանչելիութիւնը նայէ: Մէջէն քառթ մը
եկաւ, և ահա.

ՔԱՍԻՄ

Մանգումեի էֆենարի առաքեալը կամ
խմբագրապետը.

Վիսպասան եւրոպական սխթեմով:

Եւ քառթին ետեւի կողմը հետեւեալները
գտայ, և կարդացի բարձրաձայն.

Տիար Ամբակում.

« Ահաւասիկ քեզի չքեղ տուն մը, ա-
տեն ատեն անկէց ներս նայէ ու ՏՈՒՆԵՆ
ՆԵՐԱՍ կարդացած կըլլաս, քանի որ սպա-
ռած է բոլորովին և չկրցայ օրինակ մը ղըր-
կել անկէ »:

— Ամէ՛ն. ըսաւ Ամբակում, վեղարաւու-
րի մը քար հանելու ուստիճան:

— Ահա Ամբակում, ոսկեղօծ լամբար մը,
և յիշատակ է Արամ Անտոնեանէ, և հետեւ-
եալները կ'ըսէ քառթին վրայ.

« Իրաւ թէ ԼՈՅՍԻ Ա. Թիւր նուիրել կու-
ղէի, բայց սպառած ըլլալով՝ սա լամբարը
տեղը վառեցէք և ԼՈՅՍՈՒՄը գոհ եղէք, մին-
չեւ որ նոր տպագրութիւնը լրանայ: Նոր
տպագրութիւնը ո՛ր եւ է փոփոխութիւն չպի-
տի կրէ, և նորէն մէջը պիտի ըլլան երեք
կնիկները »:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Շաբթուան է՛ն մեծ և հետաքրքրական լուրն է մեծ խմբագրի մը քաղաքը, իր պատուական լուսանկարը Հանրագիտակի բացառիկ թիւին մէջ հրատարակուած ըլլալուն համար: (Վարժապետ մէջ մըն ալ չեմ ընէր. Ծ. Խ.):

ՍԿԻՒՏԱՐ. — Հոս երեկոյթները մին միւսէն փայլուն յաջողութեամբ տեղի կուտան, զրոյցի մը նայելով տեղացի չիք միւսիւ մը 24 քառիկ, 60 վալս, 50 բոլքա, 30 մազուրֆա պարած է մինչեւ երեկ 11 Յունվար 1908:

ՆՈՅՆ. — Ամօթ է ըսելը, բայց տեղի ունեցած երեկոյթի մը մէջ, տանուտէրը իբրեւ ֆօքլիթօնի սիւրբօրիք, տամաներուն մէկ մէկ հալուն նուիրեց ...: (Բարի ախորժակ և դիւրամարտութիւն կը մաղթենք. Ծ. Խ.):

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Գիւղին երիտասարդներէն աւելի օրիորդներն են որ Ֆիւռօն կընեն կոր այս ձմեռ: Պարը տիրող զբօսանքը եղած է հոս, ցատկել խաղալը գրական ֆօգրոնէն նախամեծար կը համարուի կոր: (Տաք գիրկընդխառնումը ինչ ծանր դրամօժիտներ կը լուծէ իր մէջը, նորէն պռավօ ֆէմինիզմ. Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Երիտասարդ մը երեկոյթի մը մէջ մէկ կողմ քաշուած կօշիկներուն տակ մոմ կը քսէր, փառաւորապէս պոյ ցուցուց իր չիք տամային հետ, փռուն ծափահարութիւններու մէջ: (Ուրիշ անգամ պա՛լ մոմի քսէ սինեռ. Ծ. Խ.):

ԳՈՒՄ-ԳԱՅՈՒ. — Զրոյցի մը նայելով հոս նշանածին Ծնունդի վիզիթայի եկող միւսիւ մը հին լաստիկները ձգած՝ անէր պապային նորերը հագէր կծիկը դրեր է: (Թըրախօմայէն 33 զրուշ սկօնթօ ըրէք ըստ օրինի. Ծ. Խ.):

ԲԵՐԱ. — Այս տարի շատեր իրենց նշանածներուն, կիներուն կամ քոյրերուն իբր կաղանդի նուէր, փոխանակ ոսկի, արծաթ կամ աղամանդի, ծնունդ հէլվասի տուին: (Գալ տարի ալ պայաթ ֆասուկեայ տուէք,

Բերացի ըլլալնուդ համար նուվօքէ է կըսեն. Ծ. Խ.):

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Ժողովուրդը կարող տեղ դնելով՝ պարբերական մը սկսած է սուտ ոսկիներ անցնել իր կարթին ծարիկը, բաժանորդ որսալու համար: (Աստուած շատ քաշել չիտայ ... Ծ. Խ.):

ԵՆԵՒ-ԳԱՅՈՒ. — Կաղանդը հոս ալ նուվօքներով ողջունուեցաւ: Բոլոր հասուկ օրիորդները մէկ մէկ սուլու պաշիկով զիրար կաղանդեցին ... ի տես ամենեցուն: (Մի մոռնաք թէ միւրրոպները բերնի մէջ բոյն կը դնեն. Ծ. Խ.):

ՈՍԿԵՐԶԱՅ ՇՈՒԿԱՅ. — Կաղանդի և Ծնունդի առթիւ հոստեղի վիթրիններուն մէջ աղամանդ զարդերէն հատ մը չի մնաց, երեքի հեթիք քիրայով գնողներու կողմէ, առնողներէն կը խնդրենք իւր մանր վրան ետ դարձնել: (Զըլլայ թէ կանացի կուրծքերը հազ ընեն և հոն մնան ... Ծ. Խ.):



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ ԱԼՊՈՍ

Գաւառներէն մեր բացառիկ Ալպօմէն փափաքողներէն կը խնդրուի իրենց ուղածին չափով հասցնել՝ նաեւ դրամը, հաւոր 3 1/2 զրուշէն հաշուելով, հակառակ պարագային իրենց խնդրանքները անպատասխանի կը մընան:



Արժօնատէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՏԱՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հասէսի քիւ 52.

ԱՐՍԵՆ ԼԻԻԲԵՆԻ ՏԱՐՈՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏԵԱՇ ՆԻՆԸ

— Արդեօք սիրոյ մը սկզբնաւորութիւնն է, չէնէ մի վերջաւորութիւնը, ինքնիրեն հարցուց Շօլմա, ինչ կապ կայ Քլօթիլտի, Տէսթանօթի և Մաքսիմ Պէրմօնի միջեւ: Գիտէ՞ Քլօթիլտ թէ Մաքսիմ Պէրմօն ուրիշ մէկը չէ եթէ ոչ Արսէն Լիւբէնը:

Մինչեւ ժամը եօթը, անձկալից մտիկ ըրաւ, ամենափոքր խօսքերէ օգուտ քաղելով, յետոյ, վերջին ծայր գգուշութիւնով իշաւ տեղէն և անցաւ սենեակին կողմը, որ սալօնէն չէր երեւար: Մեքենաբար սեղանին վրայ դրուած գիրքը քննեց որ Քլօթիլտ պահ մը ռուջ կը կարդար, Մանդընէի նօւնաձմերն էր:

— Եւ իտալերէն, ըսաւ Շօլմա, ա՛նա լաւ ուսեալ օրիորդ մը:

Դուրս ելաւ Շօլմա, ապահովեց որ ոչ ինքնաշարժ կառք և ոչ ալ պարզ կառք կսպասէր, ու հեռացաւ Մալէրպ ծառուղիէն: Բայց, մօտը գտնուած փողոցի մը մէջ, ձեռքին վրայ կրած վերարկուն հագաւ, գըլխարկը ձեւափոխեց, շտկուեցաւ, և այսպէս կերպարանափոխուած, վերադարձաւ և կեցաւ Տէսթանօթի բնակարանին դրանը մօտը և սպասեց:

Դրեթէ նոյն ատեն, Արսէն Լիւբէն դուրս ելաւ և մէկ երկու փողոցներ անցնելէ ետքը դէպի Բարիզի կեդրոնը գնաց: Հարիւր քայլ ետեւէն, Հէրլօք Շօլմա կը քալէր:

Ինչ վայրկեան Անգլիացիին համար: Անյազաբար օդը կը հոտոտէր, ինչպէս վարպետ շուն մը որ թարմ հետքի մը հոտը կառնէ: Իրապէս իրեն վերջին ծայր երջանկութիւն մըն էր, իր հակառակորդին հետեւիլը: Ալ ինք չէր որ հսկողութեան տակ էր, հապա Արսէն Լիւբէնը, աներեւոյթ Արսէն Լիւբէնը: Եւ զուարթութեամբ կը դիտէր, անցնողներուն մէջ այդ որսը, որ մինակ իրեն կը պատկանէր:

Բայց արտառոց երեւոյթ մը զայն շանթանարեց: Արսէն Լիւբէնի և իր մէջ գըտնուող անջրպետին մէջտեղը ուրիշ անձեր մի եւ նոյն ուղղութեան կը յառաջանային: Մանաւանդ երկու մարդիկ, կրորդ գլխարկով ձախ մայթին և ուրիշներ ալ աջ մայթին վրայէն կը քալէին, սիկաններ չրթունքնուն:

Թերեւս այս դիպուած մը ըլլալու էր: Բայց Շօլմա աւելի զարմացաւ երբ Լիւբէնի ծխավաճառի մը խանութը մտնելովը, չորս հոգիները կեցան և աւելի զարմացաւ երբ մեկնեցան անոր դուրս ելլելովը:

— Անէ՛ծք, փախաւ ուրեմն մրմաջ Շօլմա:

Այն գաղափարը թէ՛ ուրիշներ Արսէն Լիւբէնի հետքին վրայ էին, թէ ուրիշներ իրմէ յափշտակել կուզէին փառքը, զինքը կը զայրացնէր: Սակայն մարդիկը իրարմէ բաց Լիւբէնին ետեւէն կը քալէին, և անանկ մը կընէին որպէս զի չնչմարուէին:

Ծառափողոցին մօտերը, բազմութեան սեղմութիւնը՝ հետապնդութիւնը շատ շփոթեց: Շօլմա քայլերը առագցուց և բացը ելաւ այն պահուն՝ երբ Լիւբէն, Հօնկրուազ ճաշարանին վերնագաւիթը կելար: Փողոցին միւս կողմէն, Հէրլօք ծառուղիին նստարաններէն մէկուն վրայ նստած, տեսաւ Արսէն Լիւբէնը, որ ճոխ և ծաղիկներով շտկուած սեղանի մը առջեւ նստեցաւ ուր արդէն երեք պարոններ և երկու տիկիններ կը գըտնուէին և համակրանքի ցոյցով մը զինքը ընդունեցին:

Հէրլօք, Արսէն Լիւբէնի ետեւէն ինկող չորս մարդիկը փնտռեց և նշմարեց զանոնք, որոնք բազմութեան խառնուած մօտակայ սրճարանի մը երաժշտախումբը մտիկ կընէին: Չարմանալի բան, անոնք Արսէն Լիւբէնին հետ զբաղած ըլլալին չէին ցուցնէր:

Յանկարծ, անոնցմէ մէկը գրպանէն սի-

կառ մը հանեց, ու բրտէնկոթակաւոր ու գլխարկաւոր պարոնի մը մօտեցաւ, և այդ պարոնը սիկաոր երկնցուց որ վառէ ու քիչ ետքը Շօլմա տեսաւ որ կը խօսակցէին անոնք: Վերջապէս այդ գլխարկաւոր պարոնը ճաշարանին գաւիթին սանդուխներէն վեր ելաւ և ակնարկ մը նետեց ճաշասրահին մէջ: Լիւրէնը նշմարելով՝ մօտեցաւ, խօսակցեցաւ պահ մը անոր հետ, յետոյ ուրիշ սեղանի մը առջեւ նստեցաւ, և Շօլմա ստուգեց որ այդ պարոնը ուրիշ մէկը չէ՝ եթէ ոչ Հանրի-Մարթէն ծառուղիին զինքը չախշախել ուզող ձիաւորը:

Այն ատեն ամէն բան հասկցաւ: Ո՛չ մի-նակ Արսէն Լիւրէն փախած էր, այլ այդ մարդիկը մաս կը կազմէին իր աւաղակալութեան, և անոնք Արսէն Լիւրէնի ապահովութեանը կը հսկէին, իր պահպանիչ մարմինն էին, իր արբանեակները, իր ուշադիր ուղեկիցները: Ամէն տեղ, ուր որ վտանգ մը կապառնար վարպետին, հոն էին գործակիցները, անոր տեղեկացնելու համար, պատրաստ միշտ զայն պաշտպանելու: Գործակից այդ չորս մարդիկը, գործակից՝ ռըտէնկոթաւոր պարոնը:

Սարսուռ մը պտըտեցաւ Անգլիացիին մարմինին վրայ: Պիտի կրնա՞ր երբէք յաջողիլ ձեռք անցնելու այդ անհպելի էակը:

Յուշատետրէն թուղթ մը պատուեց, մատիտով քանի մը տողեր գրեց, և պահարանի մը մէջ դնելով, նստարանին վրայ պառկած տասնըհինգ տարեկան ստահակի մը ըսաւ,

— Ինծի նայէ տղաս, կառք մը նստէ և այս նամակը Զուրիգ գինետունը տար և արագապէս, և հինգ ֆրանք տուաւ անոր ու տղան անյայտացաւ:

Կէս ժամ մը սահեցաւ:

Բազմութիւնը մեկնած էր և Շօլմա ատեն ատեն Լիւրէնի արբանեակները կը նշմարէր, ու մէկը դպչեցաւ իրեն և ձայն մը ականջն ի վար ըսաւ.

— Է՛հ, ի՞նչ կայ, պարոն Շօլմա:

— Դժբէք, պարոն Կանիմարտ:

— Այո՛, ստացայ ձեր գրութիւնը գինետան մէջ, ի՞նչ կար:

— Հոն է ...

— Ի՞նչ կըսէք ...

— Հոն ... ճաշարանին խորը ... աջ կողմ ծռեցէ՛ք ... պիտի տեսնէք ...

— Բայց չեմ տեսներ կոր ...

Իր քովին շամբանեայ կը պարպէ:

— Բայց այն չէ ...

— Ինչն է ...

— Իրա՛ւ, բայց ինչպէս կը նմանի՛ լըմբուաց Կանիմարտ միամտութեամբ, և միւսները գործակիցները են:

— Ո՛չ, քովինը լորտ Բլէաթրօն է, միւսը Բլէաթի դըստուհին և դէմինը Լօնտօնի Սպանիական դեսպանը:

Կանիմարտ քայլ մը առաւ, Հէրլօք ետ քաշեց զայն:

— Ի՛նչ անխոհեմութիւն, հապա մինակ էք նէ ...

— Ան ալ մինակ է ...

— Ո՛չ, ծառափողոցին վրայ մարդիկ ունի որ զինքը կը պահպանեն, առանց հաշուելու ճաշարանին ներսիդին նստող տա պարոնը ...

— Բայց ես երբ ձեռքս Արսէն Լիւրէնին օձիքին փակցնեմ, ամբողջ սրահը իմ կողմս պիտի ըլլայ և ամբողջ սպասաւորները ...

— Լաւ պիտի ըլլար երբ քանի մը ոստիկան տանէիր ...

— Որպէս զի Լիւրէնի մարդիկը աչքերնին բանան, ո՛չ, տեսէք պարոն Շօլմա, տընտընալու ժամանակ չիկայ:

Իրաւունք ունէր, Շօլմա համոզուեցաւ: Լաւ էր փորձել բաղդը և օգտուիլ բացառիկ պարագաներէն. մինակ Կանիմարտի պատուիրեց.

— Զանայ որ կարելի եղածին չափ շատ ուշ ճանչնան քեզի:

Եւ նոյն իսկ ինք, Շօլմա, լրագրավաճառի մը խանութին ետեւը սահեցաւ առանց Արսէն Լիւրէնը աչքէ կորսնցնելու:

Կանիմարտ փողոցը անցաւ ձեռքերը գրծպանին մէջ, մարդու մը պէս որ չիտակ իր ճամբան կերթայ, բայց հազիւ հանդիպակաց մայթին վրայ հասած, թափով մը ասդին եկաւ և ճաշարանին գաւիթը մագլցեցաւ:

Սուր սուլիչի ձայն մը լսուեցաւ ...

(Շարունակելի)

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՈՅԵՐԱԿԱՆ ԳՆԱՆՈՒՄ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուլթան Համալ, Թօփապեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը չահած է ըլլոր իրեն
գիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
եւ տղայոց շիք եւ գիմացկուն փոփոխ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ շերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—17



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵԾԷՔ

ՊՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղաղ պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Չիկասանէ, Հնդկասանէ, Ճապէ եւ Ճա-
թոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մատչային:

ՀԱՆՐԱԴԻՏԱԿ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒՄԾ

Կ. Պոլսոյ համար սարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	» » 54 »	» »	27 »
Արսասանման	» » 12 ֆր.	» »	6 ֆր.

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ, Պապը-Ալի հասսէսի Ասասուրեան տպարան թիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանտաքօսթով եւ կամ բօսթայի փուլով 20 հաւաք
20 ղրուշի հաշուով:

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ՄԱՏԱՄ ՃԱՆԻԿ ՔԵՍԹՃԵԱՆ

3 Պահպան-գաբու քիւ 3

Սոյն վաճառատան մէջ պիտի կըր-
նաք գտնել այն ամէն շիք, տոկուն և
աժան առարկայները, որոնք թօհա-
ֆիլէի մաս կը կազմեն: Անգամ մը այ-
ցելելը համոզում պիտի կրնայ գոյաց-
նել թէ ուրիշ ո՛ր եւ է տեղ չպիտի կըր-
նաք գտնել նոյնքան ճոխ մթերք մը
այդ բնտուռած առթիքօլօին վրայ: